ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 21 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Վ. Պողոսյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Հրաչ Վարդանյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Հրաչ Վարդանյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի /28.11.2007թ. խմբագրությամբ՝ 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի/ և 407 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը:

Դատարանը գտավ, որ ներկայացված դիմումը ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի առումով ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի և ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի 25 հոդվածի 1-ին կետի պահանջներից ելնելով, քանի որ դրա վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի կողմից կայացված ՍԴՈ-709 որոշումը:

Դատարանը նաև գտավ, որ դիմումը ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի /28.11.2007թ. խմբագրությամբ՝ 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի/ առումով համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են Սահմանադրությանը:

Հ. Վարդանյանը միջնորդել է իրեն ազատել պետտուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ գործազուրկ և եկամտի այլ աղբյուր չունի:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Քաղ. Հրաչ Վարդանյանի դիմումը՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել՝ տրամադրելով նրան ՍԴՈ-709 որոշումը:

2. Քաղ. Հրաչ Վարդանյանի դիմումը՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի /28.11.2007թ. խմբագրությամբ՝ 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի/ սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

3. Հ. Վարդանյանին ազատել պետտուրքի վճարումից:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՀԱՐՏՈՒՂԻ
ՐՈՒԹՅՈՒՆ